**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ու Մ**

20 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 41

ԷԴՎԱՐԴ ՍԵՐՈԲԻ ԷՎԻՆՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թ-ի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Էդվարդ Սերոբի Էվինյանի հայտը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Էդվարդ Սերոբի Էվինյանին տրամադրել Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 06-043-0101-0003 և 06-043-0101-0004 ծածկագրերի բնակելի կառուցապատման հողամասերում տնակների տեղադրման համար քարե հիմքեր կառուցելու նախագծման թույլտվություն:

2. Էդվարդ Սերոբի Էվինյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

24 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 42

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Հողային օրենսգրքի" 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ կետերով, 43-րդ հոդվածով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, "Քաղաքաշինության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 11-րդ կետով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հիմք ընդունելով համայնքի ավագանու 21.06.2024թ-ի թիվ 12 որոշումը և Ժաննա Սերյոճայի Սարգսյանի հայտը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժաննա Սերյոժայի Սարգսյանին համայնքի վարչական տարածքում սեփականության իրավունքով պատկանող 06-042-0228-0055 ծածկագրով 0,21617 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքի նպատակային նշանակությունը, անասնապահական տնտեսություն հիմնելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2.Հաստատել 06-043-0228-0055 ծածկագրով 0,24617 հա հողամասում անասնապահական տնտեսություն կառուցելու նախագծման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքը և տրամադրել հողամասի սեփականատիրոջը նախագծման աշխատանքները սկսելու համար:

3.Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել Լերմոնտովո համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 43

06-043-0004-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և43-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29/04/2021 թ-ի թիվ 698-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29/12/2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 25.12.1992 թ-ին կազմված տեխնիկական անձնագրի տվյալները և "ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ" ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով վերականգնել Լերմոնտովո համայնքի 06-043-0004-0005 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փաստացի օգտագործվող 0.24504հա բնակելի կառուցապատման հողամասի, նկուղի՝ արտաքին մակերեսը 39.20քմ, բնակելի տան 1-ին հարկի 50քմ շինության հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և ճանաչել փաստացի օգտագործող Ալբերտ Ավետիքի Ժամհարյանի /10.06.1952թ.ծ./ սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքներոը և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով

4.Որոշումը ենթակա է պետական գրանցման ԱԳԿՊԿ-ում:

5.Ուժը կորցրած ճանաչել հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991 թ-ի թիվ 4 որոշման հիման վրա տրված Քաղվածքը:

6.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 06.06.2024թ-ի թիվ 38 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2024թվականի N 44

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, հաշվի առնելով Լերմոնտովո համայնքի ավագանու 21/06/2024 թ-ի թիվ որոշումը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 0.03325հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 06-043-0025-0045/ բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակելի կառուցապատման նշանակության հողամասի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ